

պատարագ անուշահոտ Գրիստոսիւ առ Աստուած, ի Հայր եւ ի Հոգիւ Սուրբ: Զի քեզ աջակցեալ քոյս ժողովուրդ, կացցուք փառաբանիչք Սրբոյ Երրորդութեանդ: Վասն զի եւ թէեւ քան զարժանաւորութիւն²⁸ քո նուազ, սակայն քան զյաւժարութիւն մեր ոչ ինչ ընդ աղաւտ: Որում Սրբոյ Երրորդութեանդ²⁹ ի սրբոյ քում բերանոյ փառք եւ պատիւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Հ. Հ. ՔՅՈՍԵՅԱՆ

²⁸ BC զարժանութիւն:

²⁹ C չիք Որում Սրբոյ Երրորդութեանդ:

ԴԻՈՆԻՍԻՈՍ ԹՐԱԿԱՑՈՒ
ԲԱՐՁՐԱԶԱՅՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԸ
(ΠΕΡΙ ΑΝΑΓΝΩΣΕΩΣ =
«ՅԱՂԱԳՍ ՎԵՐԾԱՆՈՒԹԵԱՆ»)
ԵՒ ՔՆԱՐԵՐԳՈՒԹԵԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ
ՀԱՅ ՔԵՐԱԿԱՆՆԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՄԲ

Տեսական վերոյիշեալ արծարծումները գիտական հետաքրքրութեան յոյժ կարեւորութիւն ունեն ինչպէս յունական, այնպէս եւ հայկական դպրութիւնների վաղ նշագոյն հարցադրումներին ու դրոյթներին ծանօթանալու, քերականագիտութեան եւ գրականագիտութեան սերտ աղերսակցութիւնը ըմբռնելու եւ վերջինիս առաջացման ու տեսական մշակումների ենթարկման նախաձեռնութիւնը քերական մեկնիչների ստանձամբ պարզաբանելու առումներով:

Այժմ անցնենք թեմայի քննարկմանը ըստ ամենայնի:

Յատկանշական է, որ Թրակացին ընթերցանութեան ուսմունքը սահմանում է որպէս «չափածոյ եւ արձակ երկերի անսխալ արտաբերութիւն»: Բնագրային ընթերցումն է. «Ανάγνωσις ἐστὶ πωημάτων ἢ συγγραμμάτων ἀδιάπτωτος προφορά». Հայ թարգմանիչը ճշգրտութեամբ հայացրել է. «Վերծանութիւն է քերական կամ շարագրածաց անվթար յառաջընթացիւն» (Ն. Աղոնց, «Արուեստ Դիոնիսեայ քերականի եւ հայ մեկնութիւնք նորին», Պետրոգրադ, 1915, էջ 2):

«Քերդած» բառը պատճենումն է յն. πωίμα բառի, իմաստային առումն է՝ «ստեղծուած» կամ «կերտուած խօսք» (չափածոյ): Իսկ «չարագրած» բառը պատճենումն է յն. δυγγραμμά բառի, որ նշանակում է՝ «արձակ գրութիւն», «մատենագրութիւն», «պատմագրութիւն», «վէպ»: «Անվթար» բառը համարժէքն է յն. ἀδιάπτωτος բառի, որ նշանակում է՝ «անսլոխալ», «անվրէպ», կամ «հարազատ», «անեղծ», «անաղարտ»:

Առաջարկում է «Վերծանութեան» տեսական հարցադրումներում, որ նաեւ բարձրագոյն ընթերցումների համար նախապատուութիւնը տրուի չափածոյ խօսքին՝ բանաստեղծութեանը

եւ վիպասանքին, յետոյ միայն արձակ ստեղծագործութիւններին՝ Աստուածաշնչային, սրբագրական, փիլիսոփայական, պատմագրական երկերին եւ դիցաբանական-առասպելաբանական գրոյցներին: Դաւիթը չափածոյ երկերի առաջնութիւնը պատճառաբանում է նրանով, որ իւրաքանչիւր արուեստաւոր կամ գիտնական «յարգի» է համարում իր արուեստը կամ մասնագիտութիւնը. երկրորդ՝ բանաստեղծները («քերթողք») բանական արուեստի «նախադուռը» համարում են իրենց չափածոյ ստեղծագործութիւնները. երրորդ՝ բարձրագոյն ընթերցանութեան մէջ վարժ կրթութեան ձեռքբերումը նախապայման է առեւտարակ չափածոյ եւ արձակ ստեղծագործութիւնների հեղինակման համար միաժամանակ:

Ահա թէ ինչպիսի կարեւոր եւ լուրջ տեղ է տրուում «Վերծանութեան» բաժնին քերականագիտութիւնը դասաւանդելիս: Դաւիթը եւ Մագիստրոսը միմեանց լրացնելով այս առնչութեամբ գրում են. «Եւ զի՞ նախակարգէ զվերծանութիւն քերթողաց, եւ ապա՞ շարագրաց. նախ՞ զի ամենայն արուեստաւոր զիւրն կամի յարգուն ցուցանել. երկրորդ՝ զի նախադուռն իսկ եւ սկիզբն բանաւոր արուեստիս զիւրեանց ասեմ լինել քերթալոգն. երրորդ՝ զի թէ ոչ նախ կրթութեամբ զվերծանութիւն ուսցի եւ տիրապէս գնորայն յառաջընթացիւն, զիա՞րդ կարասցէ շարագրել՝ որումն ոչ էր հմուտ» (ՅՆ, ՀՄՔ, էջ 124): Բայց ոչ ամէն մի բարձրագոյն ընթերցանութիւն դուես «Վերծանութիւն» է, այլ՝ անսայթաֆ («անվթար», «անգայթ»), «անվրէպ» եւ «անսխալ» ընթերցանութիւնը, որպէսզի հնչունական արտաբերումը անչնչաւոր գրութեան՝ նաեւ «վայելչագեղ» լինի եւ ունկնդիրների համար հաճելի ու արտոյալուր: Մագիստրոսը զգուշացնում է. «Վասն որոյ ասէ՝ «Վերծանութիւն է մասն

քերթողաց կամ շարագրաց», այսինքն՝ գրեցելոցն այնոցիկ, որք ի քերթողացն չափածոյ ինչ բան կամ շարադրական եւ կամ պատմագրական ինչ. անգայթ՝ անվրէպ եւ անսխալ ընթերցողութեամբ վայելչականիւմ յառաջբերութիւն» (անդ):

Եսայի Նչեցին փորձում է հասկանալ եւ հիմնաւորել, թէ «Վերծանութեան» մասին թրակացին ինչու երկու անգամ է անդրադառնում՝ մէկը քերականութեան բաժինները բնութագրելիս, միւսը՝ առանձնաբար՝ յատուկ գլուխ տրամադրելով դրան, նկատի ունենալով «իմաստութեան փառաբան» դարպասներին մտնելու «առաջին աստիճան» հանդիսանալու նրա յոյժ կարեւորութիւնը. «Յետ ասելոյ զվեց մասանց քերականութեան գանուանս, դարձեալ ի ձեռն առնու զվերծանութիւնն՝ գառաջին մասն, եւ նախադասէ գառ իբրեւ գաստիճան առաջին կամ ըզմուտ դրան ի փառաբանութեան» (ԵՆ, ՎՔ, էջ 69): Բացի այս իրողութիւնից, նշում է Նչեցին, կրկնակի անդրադարձումը այս թեմայի՝ ոչ թէ կրկնաբանութեան հետեւանք է, այլ՝ գիտական մեթոդի պահանջի, քանի որ քերականութեան ամբողջական եւ սպառնչ հետազոտման համար թրակացին հարկադրուած էր ներկայացնելու նրա մասերը կամ բաժինները սկզբնապէս, ապա այդ մասերի մասերը՝ մինչեւ անտրոհելին (իր արտայայտութեամբ՝ «մինչեւ . . . յանհատան»), եւ միայն նման մեթոդով կատարուած քննութեան դէպքում է, որ «չահեկանութիւնը» ակնբախ կը լինի. «Եւ գարմանալ արժան է ընդ արուեստաւորս, զի յառաջ ասաց զտրին մասունս, իսկ այժմ ասելոց է գմասանց մասունս՝ մինչեւ տարեալ հասուցէ յանհատսն, ուստի առաւելապէս շահիցն մատակարարեսցի աւգուտ» (անդ):

Վարդան Արեւելցին «Վերծանութիւնը» իր բոլոր կանոնների իմացութեամբ՝ «գիտութիւն» է համարում, ի հարկէ «մասնաւոր» բնոյթի, ինչպէս եւ պատմագրական եւ ժամանակագրական արձակ երկերի առանձնայատկութիւնների ըմբռնումը, քանի որ «ընդհանրական գիտութիւնը» միայն աստուածաբանութեանն է վերապահուած. «Վերծանութիւնն «գիտութիւն» ասի, իսկ քերականացն՝ մասնաւոր գիտութիւն, զի Աստուծոյ գիտութիւնն միայն է ընդհանուր, իսկ մարդկային գիտելիս ամենայն մասնաւոր է՝ շարագրածաց եւ ժամանակագրածաց» (ՎԱ, ՄՔ, էջ 76):

«Վերծանութեան» տեսութիւնը Երզնկացին մշակում եւ ամբողջացնում է Մովսէսի եւ առաջին թարգմանիչների հայեացքների արծարծումով: Նա քերականներին ու լաւագոյն գրականագետներին բնութագրում է իբրեւ «հոգեվարժ» ուսումնականների («գրամարտիկոսաց եւ վերծանողաց հոգեվարժ»), որոնք «կարդացողութեան արուեստի» սկզբունքներն են իբրեւ «չահաւորագոյն» հրահանգներ դպրութեան:

Նրանք, բնականաբար, քաջատեղեակ պէտք է լինեն սուրբ հայրերի աշխատութիւնների ձայնեղեջլային պայմանական նշանների համակարգին, որոնցով «գարդարուած» են դրանք իմաստային ճիշդ ընկալումների եւ արտաբերման համար. երկրորդ՝ «կարդացողութեան արուեստի» շահեկանութիւնը գուճողուած է նաեւ իմաստային «համեղութեամբ», քանի որ դրան հրատեղութիւնը թելադրուած էր, առաջին հերթին, Աստուածաշնչի կենսանորոգ պատգամների «հեշտալուր» թափանցումով ունկընդորի հոգու խորախորհուրդ ծալքերում: Այդպէս էլ նա գրում է. «Արդ, պարտ է գրամարտիկոսաց եւ վերծանողաց հոգեվարժ երկոց հարցն սրբոց տեղեակ լինել, որք զԱստուածաշունչ կտակարանս աստուածալայելուչ գարդու ի ձեռն հոգւոյն սրբոյ գարդարեցին եւ դիւրբնկալ եւ հեշտալուր գրանն կենաց աւանդեցին յերկրի ըստ հնոցն գիտից արուեստի, որք զկարդացողութեանն արուեստ յաւէտ շահաւորագոյն եւ կարեւոր համարեցան մեզ յայտնել եւ ընդ պատուիրանացն աւանդութիւն գարուեստիցն համեղութիւն խառնելով» (ԵՆ, ՎՔ, էջ 143): Դպրութեան տեսաբանների փաստարկմամբ՝ «Վերծանութեան արուեստի» շահեկանութիւնը պատճառաբանում է նրանով, որ արուեստով բարձրագոյն ընթերցումը առաջացնում է մարդկային հոգիների ցնծութիւն ու նոյնիսկ երանութիւն, հէնց այդ ժամանակ է, որ հաւատքը ներթափանցում է ախորժալուր ընթերցումով եւ ստեղծում հաղորդակցութիւն Գերագոյնի հետ՝ աստուածային խօսքերի ներազդեցական հմայքով. «Զի յառաջն հոգիսն գուարմացուցեն, զի հաւատք ի յսելոյ են եւ յուր ի բանէն Քրիստոսի» (անդ): Իրենց իսկ ըմբռնմամբ՝ բարձրագոյն հմուտ ընթերցանութիւնը սուրբ մատեանների լեզուի ամբողջ հրմայքը բացայայտելու միջոց է, որով կախարդուած են ունկնդիրների հոգիները իմաստային նրբութիւնների ընկալման գմայ-

լանքով, երբ առթած գրգիռների շնորհիւ պայծառանում են մտքերը եւ լուսաւորում հոգիները մեկնաբանումների պարզաբանմամբ, արդիւնքում՝ մարդիկ հարստանում են գաղափարներով եւ դառնում «առատամիտ». «Ապա որք գեղեցիկ վերծանեն, քրքրեն զմիտս յառաջն եւ բացմամբ մեկնութեանցն զհոգիսն յուսաւորեն, ըստ գրեցելոցն՝ թէ իմանալ գաւրէնս մտաց առատացի» (անդ):

Նախ՝ ունկնդրի «առատամտութիւնը» պայմանաւորուած է նրանով, որ ընթերցողը պէտք է կարողանայ գրաւոր խօսքի նախադասութեան անդամների փոխարարբերութիւնը ճիշդ բաժանմամբ վերարտադրել, ինչպէս «Վերծանութեան արուեստն» է հրահանգում, որպէսզի ինչպէս իր, այնպէս եւ գրուածքի գորութիւնը բացայայտել կարենայ. «Իսկ որ առատամիտքն են՝ արժան է տրամատութեամբ վերծանել ի կարդացմանն ըստ իրատու արուեստիս, յարուած է նրա զընկացին, զի իւրն եւ վասն որոյ իրն է՝ ծանրիցի արութիւն» (անդ): Եւ որովհետեւ գրուածքի պարփակած երեւոյթների ու իրողութիւնների ընդգրկումը տարողունակ է եւ բազմազան իրենց բնոյթով, հետեւաբար բարձրագոյն ընթերցողի պարտաւորութիւնն է իր ձայնի «զանազանութեամբ» դրսեւորել գրուածքի բառերի իմաստային նշանակւելուն ու նախադասութեանն իմաստային նշանակւելուն: Եւ ինչպիսի՞ արժէտը մամբ էին գնահատում այն. «. . . Եւ մի՛ առարացեղութեամբ խառնափնդորել զիմացուածն, եւ կամ ոչ ներհոնութեամբ տրոհել եւ տալ իւրաբանչիւրում կիտի զիւր մասն, այլ տգիտաբար աւցտել («անշատել» - Լ. Ո.) զանդաման եւ կեղեքել գազանաբար («բաժանել գազանի նման» - Լ. Ո.), եւ փոխանակ յուսաւորելոյ զմիտս յառաջն՝ մթացուցանել զհոգիս նսեմութեամբ» (անդ, էջ 144):

Եթէ ըզ ձական իցէ իմացուածն՝ ըստ այնմ ընթերցումու, ըստ ըզ ձիցն բազ ձման. եւ եթէ խրոխտական՝ ըստ այնմ» (անդ): Կարեւորն այն է, որ բառիմաստների եւ յուզաշխարհի տարբեր տեսակներ արտայայտող նախադասութիւնների հաղորդումը պէտք է վերարտադրել ստոյգ համապատասխանութեամբ, ընդ որում ան-

թոյլատրելի մեղանչում եւ «Վերծանութեան արուեստի» խափանում համարելով իմաստային առումների եւ յուզական տարբեր որակներ ներկայացնող նախադասութիւնների «խառնումը» միմեանց հետ, դրանց բազմերանգութեան ողբալի անըմբռնողութիւնը: Երզնկացին զգուշացնում է. «. . . Մի՛ գայլ ընդ այլոյ փոխադրել անէր (իմա՝ «անհարազատ», «օտար» - Լ. Ո.) եւ անփաստակ (իմա՝ «անմասն», «տարատեսակ» - Լ. Ո.) բացատրութեամբ, այլ զիւրաքանչիւր բառին ըստ իրացն իմեան հարազատս եւ ընտանի առնել եւ յառաջ բերել զմանաբանութիւնն ձայնիւ եւ ձեռով, եւ մի՛ առարացեղութեամբ խառնափնդորել զիմացուածն . . .» (անդ, էջ 143-144):

Ի դէպ, հարկ է ընդգծել Երզնկացու այն կարեւոր դիտումը եւս, որ եթէ «կարդացողութեան արուեստի» հմուտ կիրառմամբ «առատամիտ» են դառնում ունկնդիրները եւ «լուսաւորում» իրենց հոգիները, ապա իմաստային եւ յուզական երանգների անտեսմամբ «անարուեստ» ընթերցումը պարզապէս հակառակ ներգործութիւնն է ունենում՝ մթագնում է նսեմութեամբ՝ ունկնդիրների հոգիները. . . : Ահա թէ ինչ է նշանակում «Վերծանութեան արուեստը» եւ ինչպիսի՞ արժէտը մամբ էին գնահատում այն. «. . . Եւ մի՛ առարացեղութեամբ խառնափնդորել զիմացուածն, եւ կամ ոչ ներհոնութեամբ տրոհել եւ տալ իւրաբանչիւրում կիտի զիւր մասն, այլ տգիտաբար աւցտել («անշատել» - Լ. Ո.) զանդաման եւ կեղեքել գազանաբար («բաժանել գազանի նման» - Լ. Ո.), եւ փոխանակ յուսաւորելոյ զմիտս յառաջն՝ մթացուցանել զհոգիս նսեմութեամբ» (անդ, էջ 144):

Բանն այն է, որ ոչ միայն տրոհման նշանների՝ կէտերի աւելորդ կիրառմամբ, շեշտադրութեան անհամաձայնութեամբ («անհանդէպ ոլորակաւ») աղաւաղումներ ու «մթագնումներ» կ'առաջանան, այլեւ նոյնիսկ իմաստային ներհակութեան կարելի է յանգել բնագրային լեզուի անդամների յարաբերութեամբ, որով «կը սարդեն» նման «ճեղքուածքներից» («հերձուածք») բոլորովին «ա՛յլ» մըտքեր, որ երբեք չեն թելադրուած հեղինակային բնագրից: Հէնց այդ պատճառով էլ չափազանց կարեւոր է քերական-ընթերցողի համար խորիմացութիւնը զըրաւոր լեզուի իմաստային նրբերանգների եւ

եւ երկար ձայնաւոր տառերը, որ նորանցով էլ կազմուած են նոյնանման վանգեր, իրանց տաղաչափական պայմանները եւս որոշուած են սուղ եւ երկար վանգերով: Բայց ինչ ազգ չունի ոչ բառերի վերայ թափառող շեշտեր, եւ ոչ սուղ եւ երկար ձայնաւոր տառեր, սոցա տաղերը չափուած են բնական առողջութեամբ միայն՝ այսինքն վանգաչափով, եւ ամէն տաղաչափական անդամներ եւ տողեր տրոհուած են որոշ վանգերի թուով: Այս երեք եղանակներն են ընդհանրապէս, որով կազմակերպուած են զանազան տաղաչափութիւնները, եւ շատ սակաւ կարող ենք հանդիպիլ բացառութեանց» (Աւետիք Բահաթեան, Հին Հայոց Տաղաչափական Արուեստը, Քննական տեսութիւն, Երեւան, 1984, էջ 125): Իսկ համեմատութեան զուգահեռ անցկացնելով յունական եւ հայկական տաղաչափութիւնների միջեւ, սկզբունքային տարբերութիւնները բացայայտելիս հմուտ տաղագէտը ընդգծում է. «Յոյնք քերթուածքի ոտքերը որոշում են սուղ եւ երկար տառերով կամ վանգերով, բայց հայք այդպիսի տառեր եւ վանգեր չունենալով՝ առոգանութեան պայմանաւ կազմակերպում են սուղ եւ երկար անդամներ ամբողջապէս՝ որոնք աւելի եւս բացորոշ եւ աջողապէս են կատարում այն ամէն պաշտօնները, ինչ որ Յունաց մէջ սուղ եւ երկար վանգերը. ինչպէս են շարժուածքի արագութեան եւ դանդաղութեան աստիճանները եւ այլն» (անդ, էջ 9-10): Առաւել քան համոզիչ դարձնելով իր այս յայտնաբերած ազգային սեփական տաղաչափութեան բնութագրերը, Աւետիք Բահաթեանը այլուր նշում է նաեւ. «... եթէ ողջմտութեամբ ի նկատի առնուք հայոց բարբառի այն անվիճելի յատկութիւնը, որ ոչ թափառող շեշտեր ունի իւր բառերի վերայ, եւ ոչ սուղ եւ երկար ձայնաւոր տառեր, ուրեմն հին հայոց քերթողները իրանց տաղաչափական անդամների մէջ ներդաշնակութիւն որոնելու հարկ էր որ բացառապէս դիմէին իրանց բնական առողջութեանը, եւ իրանց տաղերի անդամները եւ տողերը հատուածային վանգաչափով» (անդ, էջ 126):

Սկզբունքային այս տարբերութեամբ հանդերձ, որ բխում է երկու լեզուների՝ յունարէնի եւ հայերէնի արտասանական բնոյթի առանձնայատկութիւններից, Բահաթեանը նաեւ ընդհանրութեան աղբրներ է հաստատում նրանց

քերթողական արուեստների միջեւ՝ հաւաստելով միաժամանակ. «Սուղ եւ երկար անդամների ներուժութեամբ, վաղուց արդէն հայոց քերթողական արուեստը ազգակցութիւն հաստատեց Հելլենականի հետ...» (անդ, էջ 128):

Բայց եթէ ազգային մեր տաղաչափութիւնը զուրկ է «սուղ» եւ «երկար» վանկերից, ապա օժտուած է, այնուամենայնիւ, տաղաչափական «սուղ» եւ «երկար» անդամներով, որոնք կշռոյթ են ստեղծում եւ, փաստորէն, փոխարինում են վանկային «երկար» եւ «սուղ» արտասանութիւններին իրենց համարժէքութեամբ, դրանով էլ փոխյատուցում յունարէնի ամանակային (մետրական) չափին. «... Կան անդամների սղութեան եւ երկարութեան նշաններ հայոց տաղաչափութեան մէջ, - իրաւամբ նկատում է Բահաթեանը, - բայց բաց է ի բաց հերքում եմ այն կարծիքը թէ - սղութեան եւ երկարութեան այդ զգալի երեւոյթները կատարուած են վանգերով, ինչպէս որ յունաց եւ հռոմոց մէջ: Թէպէտեւ թէ՛ յունաց եւ հռոմոց սուղ եւ երկար վանգերը եւ թէ՛ հայոց սուղ եւ երկար անդամները նոյնաման պաշտօններ են կատարում տաղաչափութեանց մէջ» (անդ, էջ 45): Այս առնչութեամբ խորաքննիչ հետազոտողը բացայայտում է նաեւ «սուղ» եւ «երկար» տաղաչափական անդամների օրինաչափութիւնները. «Սուղ պիտի անուանել այն ամէն անդամները՝ որոնք բազմավանգ են եւ նոցա արտաբերութիւնը կատարուած է արագ, բայց երկար՝ փոքրավանգ անդամներն են եւ որոց արտաբերութիւնը համեմատաբար կատարուած է ծանր (իմա՝ դանդաղ - Լ. Ո.)», - բանաձեւում է նա:

Ազգային տաղաչափութեան ակունքները բացայայտող ներհուն չափազէտը նշում է միաժամանակ հայ քերթողութեան տողերի ու անդամների «համաչափ» եւ «անհամաչափ» առկայութիւնը դեռեւս հեթանոսական շրջանից, բնութագրում իւրաքանչիւրի առանձնայատկութիւնները եւ կառոյցային օրինաչափութիւնները. «Նրկու տեսակ քերթողական չափ ի հընուց սովորական էին մեր լեզուի մէջ, - յարում է նա, - մէկն համաչափ որն գործադրում է եւ մեր այժմեան դարում՝ այն ուսանաւորներն են, որոց անդամները եւ տողերը միշտ միօրինակ են ընթանում, բայց

միւսն է անհամաչափ՝ որոց տողերը եւ անդամները քերթողի ախորժանաց համաձայն կարող են փոփոխուիլ, երբեմն սղուել եւ երբեմն երկարանալ» (անդ, էջ 7):

Համաչափ տողերի եւ անդամների դէպքում քերթուածի կառոյցը բնորոշում է միայնարութեամբ ու միօրինակութեամբ, որը կաշկանդում է քերթողի գրասցմունքային յորդումներն ու բազմերանգութիւնը: Ընդ որում նրա տաղաչափական անդամները կարող են բաղկանալ 3, կամ 4, կամ 5, կամ 6 վանգերից, այսինքն 3-6 վանգերից: Նրանք կարող են եւ խառը դասաւորում ունենալ՝ 3 եւ 4, 4 եւ 5, 5 եւ վեց վանգերի հերթազարմաներով: Հետեւաբար՝ «Նոցա տողերը կարող են կամ միանդամ, կամ երկանդամ, կամ եռանդամ եւ կամ քառանդամ լինել, ոչ աւելի քան քառանդամ տող եւ ոչ աւելի քան վեցավանգ անդամ գործադրել անկարելի է» (անդ, էջ 8): Այս օրինաչափութիւնը բացայայտելուն նպաստել է հելլենակի քերթուածների կամ տաղերի «խառն տողաւորութիւնը» նոյնպէս յատկանշական է եղել Հայոց տաղաչափական արուեստին, «որոց տողերը սովորականի պէս միանման չեն, այլ միեւնոյն քերթուածքի մէջ երբեմն միանդամ, երբեմն երկանդամ, երբեմն եռանդամ եւ երբեմն քառանդամ տողեր գործադրուած են խառն ի միասին» (անդ):

Համեմատական քննութիւնը եկեղեցական երգերի ու շարականների անբլբլայտէն բացայայտում են սերտ աղերսակցութիւնն ու հարազատութիւնը հեթանոսական երգերի եւ քերթուածների հետ՝ իրենց խորքային ու ենթաշերտային առնչութիւններով, ընդ որում թէ՛ տաղաչափական միաւորների, թէ՛ տողակարգութեան եւ թէ՛ կշռոյթային առումներով: «Անհամաչափ քերթուածանց համար նախագաղափար օրինակներ ունինք Եկեղեցական տաղերը, երբեմն շարականները եւ նաեւ Գ. Նարեկացոյ աղօթական եւ այլ քերթուածները, եւ այլն, որոնք աւանդեցին մեզ եկեղեցական քերթողները փոխ առնելով նոցա տաղաչափական արուեստը նախնի ազգային քերթուածներից», - հաւաստում է հետազոտողը (անդ, էջ 11): Այն աներեր եզրակացութեան է յանգում, որ հեթանոսական քերթուածները «միեւնոյն այն անհամաչափ եղանակն ունին, ինչ որ գտնուած ենք եկեղեցական քերթուածների մէջ, միայն այն տարբերութեամբ, որ վիպասանականների մէջ նկատուած են անաւելի քան մի քանի քառանդամ տող եւ ոչ աւելի քան վեցավանգ անդամ» կառոյցը - Լ. Ո.), որ տավեցական քերթուածների կամ շարաչափ կառոյց ունեցող քերթուածների կամ շարաչափի կառոյցը - Լ. Ո.), որ տավեցական քերթուածների կամ տողերի քան վեցավանգ անդամ» կառոյցը - Լ. Ո.), որ տավեցական քերթուածների կամ տողերի քան վեցավանգ անդամ» կառոյցը - Լ. Ո.), որ տավեցական քերթուածների կամ տողերի քան վեցավանգ անդամ» կառոյցը - Լ. Ո.):

խառն գործ են ածուած երբեմն փոքրավանգ եւ երբեմն բազմավանգ անդամներ» (անդ, էջ 8):

Ազգային տաղաչափութեան այս իւրայատկութեան ըմբռնումը ընդարձակում ու խորացում է մեր ճանաչողութիւնը նրա ընդգրկումների տարողութեան ու բնոյթի մասին: Պարզուած է, որ «հայք ի հնուց սովոր էին խառն տողակարգի, որոց կիրթ եւ կատարեալ օրինակները պիտի տեսնենք առաւելապէս անհամաչափ քերթուածների մէջ» (անդ, էջ 8):

Քերթուածների կամ տաղերի «խառն տողաւորութիւնը» նոյնպէս յատկանշական է եղել Հայոց տաղաչափական արուեստին, «որոց տողերը սովորականի պէս միանման չեն, այլ միեւնոյն քերթուածքի մէջ երբեմն միանդամ, երբեմն երկանդամ, երբեմն եռանդամ եւ երբեմն քառանդամ տողեր գործադրուած են խառն ի միասին» (անդ):

Համեմատական քննութիւնը եկեղեցական երգերի ու շարականների անբլբլայտէն բացայայտում են սերտ աղերսակցութիւնն ու հարազատութիւնը հեթանոսական երգերի եւ քերթուածների հետ՝ իրենց խորքային ու ենթաշերտային առնչութիւններով, ընդ որում թէ՛ տաղաչափական միաւորների, թէ՛ տողակարգութեան եւ թէ՛ կշռոյթային առումներով: «Անհամաչափ քերթուածանց համար նախագաղափար օրինակներ ունինք Եկեղեցական տաղերը, երբեմն շարականները եւ նաեւ Գ. Նարեկացոյ աղօթական եւ այլ քերթուածները, եւ այլն, որոնք աւանդեցին մեզ եկեղեցական քերթողները փոխ առնելով նոցա տաղաչափական արուեստը նախնի ազգային քերթուածներից», - հաւաստում է հետազոտողը (անդ, էջ 11): Այն աներեր եզրակացութեան է յանգում, որ հեթանոսական քերթուածները «միեւնոյն այն անհամաչափ եղանակն ունին, ինչ որ գտնուած ենք եկեղեցական քերթուածների մէջ, միայն այն տարբերութեամբ, որ վիպասանականների մէջ նկատուած են անաւելի քան մի քանի քառանդամ տող եւ ոչ աւելի քան վեցավանգ անդամ» կառոյցը - Լ. Ո.), որ տավեցական քերթուածների կամ տողերի քան վեցավանգ անդամ» կառոյցը - Լ. Ո.):

ցի դիմաց՝ թոքեր, կնդկնդոցի դիմաց՝ լեզուն, մատները շարժումների դիմաց՝ շրթները («պոռնքն»)։ Բնաւ պատահական չէ, յարում է Առաքել Միւնեցիին, որ երբ մարգարէն յայտարարում է, թէ «Սաղմոսարանի տասը լարերով սաղմոս եմ Գեզ ասելու», դրանով ակնարկում է մարդու հոգեկան տասը «գորութիւններին», որոնք են՝ ճանաչողական հինգ եւ բնագրային հինգ զգայարանները. «Եւ թէ որպէ՛ս է քնար մարդս, այսինքն՝ զի փոխանակ փորոքութեան փայտին՝ բերանն, եւ փոխանակ լարիցն՝ ձայնն, իշուկն՝ ատամուկն, եւ ներքին ցիցն՝ թոքն, եւ կնդկնդոցին՝ լեզուն, եւ մատանց շարժմանց՝ պոռնքն, վասն որոյ ասէ մարգարէն տասն աղեաւ սաղմոսարանաւ սաղմոս ասացից քեզ։ Զի տասն աղի զտասն զաւրութիւնն հոգւոյն ասէ, այսինքն՝ հինգ զփոխականն եւ հինգ կենդանականն» (անդ)։

Նկատենք, որ «քնարական քերթութեան ներդաշնակապէս» հարցադրումը լուսաբանելիս մեկնիչները իրենց տեսական բացատրութիւններում առանձնապէս կանգ են առնում ոչ թէ բանաստեղծութեան կառուցիչ ներքին ուժ-մայնութեան առնչութեամբ, ինչպէս «տաղի» բնոյթն ու հոսիւնը մեկնաբանելիս էին վարում, այլ՝ բանաստեղծական խօսքի արտաբերման եւ նրան ընկերակցող բնարային երաժշտութեան ներդաշնակութեան պահանջի կապակցութեամբ։

Այս առթիւ Յովհաննէս Երզնկացին բնութագրում է երաժշտութիւնը իբրեւ «մեծ արուեստ», որին ըստ ամենայնի եւ «բազում յաւատարմութեամբ» անձամբ կը ցանկանար տիրապետած լինել, եթէ դրա համար իր առաջացած հասակը խանգարիչ մոմենտ չհամարէր. «Եւ զի կամիմ աստանաւր փոքր ինչ յիշել յերաժշտականէն՝ մեծէ արուեստէ, իբր գնաշակս գալրութիւն արուեստին տալով ուսումնասիրաց, որում եւ ես բազում յարժարութեամբ ըզգայի հասու լինել։ Բայց զի հասակն, որ ի դէպ էր հետեւաւ լինել ուսումնական ինչ իրի, էանց անզգայաբար» (ՅԵ, ՀՄՔ, էջ 131)։

Ըստ ժամանակի գիտական մտածողութեան՝ ինչպէս մարդը բաղկացած է մարմնից եւ հոգուց, այդպէս եւ երաժշտութիւնը. այլ կերպ ասած՝ վերջինս եւս բաղկացած է յատուկ տեսակի նիւթական գործիքից եւ նրա արտադրած յատուկ ձայնից, որը կազմում է հոգին. հետեւա-

բար՝ երաժշտութիւնը միասնութիւնն («չարախառնութիւնն») է հոգեկանի եւ մարմնականի. «Ասացեալ է յիմաստնոց, թէ որպէս կենդանին հոգի է եւ մարմին, նոյնպէս երաժշտական արուեստն շարախառնութիւնն ունի հոգւոյ եւ մարմնոյ», — պնդում է Յովհաննէս Երզնկացին (անդ)։ Ինչպէս իւրաքանչիւր արուեստ, որ մարդու ստեղծագործութիւնն է, ունենում է իր նիւթական կողմը՝ արտայայտուած թանձրացական՝ մարմնական մասից եւ ձեւից, այնպէս եւ հոգեկան՝ յուզումացական մասից։ Իսկ երաժշտութիւնը բաղկացած է «պարզ եւ մաքուր նիւթից», այն է՝ իմացականից եւ «լսողականից», որ նշանակում է՝ երաժշտութեան առաջացումը արդիւնք է, նախ եւ առաջ, հոգու ներգործութեան. բանականութեան շնորհիւ յղացում է զգայական այս կամ այն գաղափարը արտայայտելու պահանջը, լինի դա ուրախութիւն, տրտմութիւն կամ հրասթափութիւն։ Հէնց ձայնեղանակներն ու երգերը այդպիսիք են՝ իբրեւ երաժշտական արուեստի արգասիք. «Եւ ամենայն արուեստի նման են ձայնք եւ երգքն, — յարում է Երզնկացին։ — Եւ ամենայն արուեստ, որ գործի ի ձեռաց մարդկան, նիւթ արուեստին եւ ձեւ՝ մարմինն է նիւթական եւ թանձր։ Իսկ երաժշտականն ի պարզ եւ ի մաքուր էութենէն է, այսինքն՝ յիմացականէն եւ ի լսողականէն» (անդ)։

Երգերն էլ բաժանում են երկու տեսակի՝ աստուածային (չարականները) եւ աշխարհիկ («մարդկայինն») գուսանական երգեր, տաղեր, չէրասացներ) բնոյթի. եթէ աստուածային երգերը միայն եկեղեցիներում են կատարում եւ հոգու ազնուացմանն են ձգտում, ապա աշխարհիկ երգերը՝ խրախճանքների եւ տօնախմբութիւնների ժամանակ մարդկանց տրամադրութիւնն են բարձրացնում՝ հրճուանք ու բերկրալիւր զգացումներ առաջացնելով. «Եւ բաժանի սա յաստուածայինն եւ ի մարդկայինն. աստուածայինն՝ երգի յեկեղեցիս, որ յաղազս հեշտութեանն զղջումն ածէ հոգիս եւ փոխարկէ զմիտս մեղուցելոցն ի բարի խոկումն. իսկ մարդկայինն երգի ի ժողովս խրախմբեան եւ յուրախական հանդէս» (անդ)։ Աւելին. երգերի նաեւ սիոփարար ու բուժիչ յատկութիւնը ունկնդիրների համար այնքան մեծ է, որ դեղամիջոցների համազոր ներգործութիւն են ունենում, յարում է Երզնկացին, այդ պատճառով էլ երգում են նաեւ հիւանդների համար՝ նրանց

ապաքինման մաղթանքներով. «Երգեմ եւ առ հիւանդս, զի ազատակար է ի պէտս բժշկութեան, որպէս ըմպելիք դեղոց ընդ ցաշակելիսն, եւ սա՝ ընդ լսելիսն» (անդ)։ Բանն այն է, տեսաբանում է Երզնկացին, որ երգածայնը առհասարակ ինքնին «աննիւթական» է, ուստի եւ հոգեկանի իմացականի ուղորտին է պատկանում, այդ իսկ պատճառով անհրաժեշտութիւն է զգացուել նաեւ երաժշտական գործիքների յղացմանը։ Վերջիններս յոյգեր («կիրք») առաջացնելով մարդկային հոգիներում՝ բարերար ներգործութիւն են ունենում նաեւ մարդու Ֆիզիքականի կայտառացման առումով, առողջ եւ աշխոյժ պահում նրան. «Եւ զի ձայն անմարմին է եւ մեծ գալրութիւն ունի եւ ազգակցութիւն առ հոգին, եւ սակս այսր ազգակցութիւն առ հոգին, եւ սակս այսր մաստունքն առաջին, զի ուրախացուցիչ է մաստունքն առաջին, զի ուրախացուցիչ է հոգւոյ, եւ ընդունելով հոգի գուրախական կիրք՝ ներգործի առ մարմինն եւ տրամադրեալ փոխէ գնա յիւրմէ բնութենէն» (անդ)։

Եղանակների մեղեդիականութիւնը ստացւում է ներհիւստած («չարամանեալ») օղակաշարի նմանութեամբ, այն է՝ անբնդիաւտ ձեւով, հաւաստում է Երզնկացին։ Իսկ երաժշտական ձայնը կամ երգածայնը գոյառնում է ինչպէս շնչաւոր էակներում, այնպէս եւ անշունչ առարկաներում. «Եւ ե՛ն եղանակքն որպէս անշունչ շարամանեալ ընդ միմեանս։ Եւ զարս աւղից շարամանեալ ընդ միմեանս» բաժանի ձայնն յերկուս՝ ի շնչաւոր եւ յանշունչ» (անդ, էջ 132)։ Ընդ որում գոյառման տեսակներէ իւրաքանչիւրը, իր հերթին, երկակի կազմութիւն ունի՝ բնական իրից եւ նիւթական գործիքից, բանական եւ անբան էակներից։ Այսպէս, քից, բանական եւ անբան էակները կամ անշունչ առարկաները քարի, երկաթի կամ անշունչ առարկաներն են, որոնք ձայն փայտի առանձին տեսակներն են, որոնք ձայն արտաբերելու համար նպատակայարմարութիւն ունեն, իսկ նիւթական գործիքները համարում են փողերն ու քնարները. «Եւ անշունչն՝ երկան փողերն ու քնարները. «Եւ նիւթական գորկի է՝ որ բնական, եւ է՝ որ նիւթական գորկի է։ Բնականն՝ որպէս քարի եւ երկաթոյ եւ քնարից, եւ գործիականն՝ որպէս փողք եւ քնարք» (անդ)։ Ըստ ձայնի այս տեսութեան, ձայնով օժտուած շնչաւոր էակները նոյնպէս երկու մեծ մասերի են բաժանուած՝ «բանականն» կու մեծ մասերի են բաժանուած, «անբան» կենմարդուն են նկատի ունենում, «անբան» կենմարդուն են նկատի տեսակէտից՝ դարդանուն։ Իսկ ձայնի որակի տեսակէտից՝ դարձեալ երկբնոյթ իրողութեան ենք հանդիպում,

ձայն կայ, որ իմաստային («նշանակաւ») է, ձայն կայ, որ անիմաստային («աննշանակ»)։ այդ նշանակում է՝ իմաստային ձայնը համարում է ա՛յն, երբ երգելիս կամ ընթերցելիս միաժամանակ գաղափարներ են հաղորդուած, իսկ անիմաստայինը համարում են խնդուքը, ծաղրը կամ լացը, որ ո՛չ չափի են ենթարկուած, ո՛չ էլ գաղափարներ են հաղորդուած. «Եւ շնչաւորն ասի երկակի՝ բանական եւ անբան։ Բանաւորն՝ որպէս մարդոյ, եւ անբանն՝ որպէս անասնոց։ Եւ բանաւորն բաժանի յերկուս. է՛, որ նշանական է, եւ է՛, որ աննշան։ Նշանական է, որ ձայնիւ զիմաստս բանի երեւցուցանէ յերգս եւ յընթերցումն, աննշան՝ որպէս ծաղր եւ լալումն, որ ոչ ունի չափ եւ ոչ նշանակէ իրս» (անդ)։

Ձայնի հակադրութիւնը լուսութիւնն է, խաղաղութիւնը կամ անդորրութիւնը։ Բայց դրանք կազմում են հակադրամիասնութիւն. ձայնը «հետեւում» է լուսութեանը կամ անդորրութեանը, իսկ վերջիններիս առկայութեան դէպքում բացառում է ձայնի ծաւալումը։ Ըստ երաժշտաձայնային այս տեսութեան՝ «... ամենայն ձայն ի լուսն հետեւի եւ ի խաղաղամասին։ Եւ էութիւն ձայնի է ընդ յաւդս հնչմամբ գնալ ի տեղոյ ի տեղի, եւ հակառակ նորին՝ է լուսն եւ խաղաղիւն» (անդ)։

Երաժշտաձայնային տեսութեան կարեւոր կանխադրոյթներից մէկն այն է նաեւ, որ ինչպէս թուահամարի կամ «գրուցատրութեան» խօսքի համար, հնարաւորութեան առումով, որեւէ չափ ու սահման գոյութիւն չունի, որով հետեւ դրանք անսպառ գումարուող կամ ծաւալուող իրողութիւններ են, այդպէս եւ երաժշտական ձայնի ու երգերի համար սպառման կամ աւարտի սահմանագիծ չկայ. այն անվերջ վերստեղծուող մարդկային հոգու հրաքանչ արարչականութիւն է. «Եւ սեռ երաժշտականութեանն ըստ համարողականին ձեւանայ, զի որպէս թիւ համարացն անչափ են, նոյնպէս եւ երաժշտական երգոցն» (անդ)։ Իսկ գոյառման տեսակետից եթէ չկայ որեւէ թիւ առանց առաջին թիւի հետ ունեցած յարաբերութեան, կամ չկայ գիծ՝ առանց նշանի հետ ունեցած յարաբերութեան, այնպէս եւ ձայնը առանց օղի տատանումների

ալիքների շարժման գոյությունը չուներ: Հինգ այս իրողությունից մեկնելով էլ իմաստասերները ստեղծագործական յամառ որոնումներից յետոյ իվերջոյ կարողացան «անմարմին ձայնը» նիւթական գործիքների միջոցով վերարտադրել. «Նւ որպէս ոչ գոյ թիւ առանց միակերպի, եւ ոչ գիծ՝ առանց նշանի, նոյնպէս եւ ոչ ձայն՝ առանց շարժելոյ: Վասն որոյ իմաստասէրքն բազում հնարս հանճարոյ գտին զանմարմնութիւն ձայնին ի ձեռն նիւթական գործեաց երեւեցուցանել» (անդ):

Իսկ երաժշտական գործիքներն էլ, որոնք երգ են յորինում, բազմազան են իրենց կառոյցով. ոմանք բազմալար քնարներ են, ոմանք՝ սակաւլար, ուրիշներ՝ փողային գործիքներ են: Իսկ դրանցում ամենայաջողը երաժշտական արուեստի կատարման առումով՝ անշուշտ չորսլարանի քնարն է. «Նւ բազում են ձեւք եւ կերպարանք գործեաց. է՛, որ ի բազմաց լարից եւ աղեաց, եւ է՛, որ սակաւ, եւ է՛, որ փողովք: Այլ չորեքաղեանն քնար առաւել ցուցանէ զգաւրութիւն արուեստիս . . .» (անդ):

Դեռեւս Դաւիթ Անյաղթը իր «Սահմանք իմաստասիրութեան» երկում յիշեցնում է, ասում է Նրզկացին, թէ ինչպիսի ներգործութեան հզոր ուժ ունի երաժշտութիւնը՝ այս առթիւ Մեծն Աղէքսանդրի հետ կապուած մի դրուագ վկայակոչելով. «. . . պարտ է գիտել, թէ մեծ է զաւրութիւն երաժշտականին՝ պէսպէս կրիւք ըմբռնելով զհոգին եւ տրամադրելով, որպէս յայտ առնեն մրմունջք եւ ողբք ըստ ինքեանց տրամադրելով զհոգին, որպէս վիպասանեալ է ոմն վասն Աղէքսանդրի, եթէ ի խրախուրթեան եղով երաժիշտն զպատերազմականն նուագէր զմատն, եւ նա իսկոյն զինեալ արտաբն դիմեաց: Իսկ դարձեալ երաժշտականին զուրախականն բախեալ նուագս՝ անդրէն դարձեալ ի բազմականն նեմէր» (անդ, էջ 134):

Պատահական չէ, որ Ստեփանոս Միւնեցին եւս պահանջում է «ներդաշնակութիւն» պահպանել, մի կողմից՝ երգիչների յոյզերի, գաղափարների ու ներշնչանքի, միւս կողմից՝ նուագերգուների ու նրանց ձայնային գործիքների հանած եղանակների, ինչպէս եւ «գուսանական դաշնայիկների» միջեւ, «. . . Ձայն տեսցուք, որ ասէ՝ «զբանարական քերթութիւնն ներդաշնակապէս». այսինքն՝ զբաշնակումն ձայնին ըստ

նուագերգացն յարմարութեանն, որպէս նոքա զգուսանական դաշնայիկսն» (անդ):

Յովհաննէս Նրզնկացին խորհուրդ է տալիս, «ներդաշնակութեան» տեսութեան առթիւ, շարականները եւ աշխարհիկ երգերը կատարել՝ համապատասխանեցնելով մարդկային ձայնը եւ երաժշտական գործիքներինը այն յոյզերի ու գաղափարների արտայայտմանը, որով երաժիշտը կամ երգիչը ցանկանում է ունկնդիրների հոգում համանման զգացումներ, յոյզեր ու գաղափարներ առաջացնել. իսկ այդ նշանակում է՝ ներդաշնակութեան նպատակադրումն էլ հինգ ծառայում է այդպիսի յոյզեր, զգացումներ ու գաղափարներ զարթեցնելուն մարդկային հոգու յուզաշարժում. . . : Նա այդպէս էլ գրում է. «Նւ դու յերգելն զաստուածային երգըս կամ զմարդկայինս, ըստ պատահման իրին ձեւացո ի քում շնչաւորական եւ ձայնական գործիսդ՝ զուրախականին կամ զտրտմականին, զխաղաղականն կամ զպատերազմականն, զհիւանդութեանցն կամ զառողջականն, որպէս զի եւ դու տրամադրեալ փոխեցես ի ձեռն յարմարական եւ սրբանուագ ձայնին զմասունս հոգւոյ լսողին» (անդ, էջ 134-135):

Վարդան Արեւելցու հաստատմամբ՝ քնարական քերթութեանը զուգորդում էին, բացի քնարից, նաեւ ծնծղան եւ երաժշտական այլ գործիքներ, որ տարաբախտաբար չի յայտնում. «Քնարն գործիքն է՝ զինչ որ լինին՝ թէ երկուաղեան է եւ թէ չորսաղեանն եւ կամ տասնաղեանն, որպէս Դաւթայն, եւ կամ զինչ եւ է հնար արուեստական հնչողաց ծնծղայից եւ այլոց» (ՄՔ, էջ 79): «Ներդաշնակութեան» պահանջը մեկնում է իբրեւ ձայնի, երգի եւ բանաստեղծական տաղի բառերի համաձայնեցումութիւն, բացառելով ամէն մի անբարեհրնչունութիւն. «Իսկ ներդաշնակելն (այն) է, որ դաշնեա եւ ըզորդեա զձայնդ եւ զերգն եւ զտաղն, որ խառնին յիբեար եւ որպէս զմի եղանն եւ չելենն խառն եւ անյարմար» (անդ):

Նոյն ըմբռնումն ունեն նաեւ Նսայի Նչեցին (ՎՔ, էջ 73) եւ Առաքել Միւնեցին. վերջինս գրում է. «Իսկ որ ասէ՝ «ներդաշնակապէս», այսինքն՝ զի երաժիշտն յարմարութիւն (իմա՝ «համաձայնեցուածութիւն» - Լ. Ո.) ունի ձայնի եւ աղւռնի եւ ոտին եւ բանիցն» (ԹՔՀԼ, էջ 91): Միայն առաւել մանրամասնամբ նոյն

բացատրութիւնն է տալիս նաեւ Դաւիթ Աղէթուցին. «Քնար զերգարանս ասէ, այսինքն՝ զսագերն, եւ քերթութիւն զյարմարաւորելն ասէ՝ զպատշաճաւոր բառսն եւ զձայնսն նմանեցուցանել, զբանն իրին, այսինքն թէ անուն է եւ թէ բայ եւ ներն նախդիր: Նւ դաշնելն է, որ չափէ եւ կռէ եւ հաւասարէ զաղին եւ զլարն հետ միւս լարին, եւ զքնարսն. հետ միւս քնարին, եւ զաւաչնի (իմա՝ «երգ», «մրմունջ» - Լ. Ո.) հետ քնարիցն, որ զոյգ եւ հաւասար ելանեն ձայնք եղանակացն: Այդ է, որ ասէ. դաշնել զքնարական քերթութիւն» (ՄՔ, էջ 73): Իսկոյն եւեթ իր մեկնութիւնը առնչելով շարականների եղանակաւոր արտաբերումներին, Աղէթուցին յորդորում է. «Սոյնպէս եւ զամենայն հոգեւոր երգս, որ երգեն, պարտ է, որ դաշնեն եւ հաւասարեն միաբան ընդ միմեանս եւ միաբան շեշտեն եւ զձայնսն ընդ միմեանս պարոյկեն առհասարակ իբր ձայն եւ երկարեն եւ սղացուցանեն եւ մի լիցի, որ մինն շեշտէ եւ միւսն բթէ, մինն եւ մի լիցի, որ մինն շեշտէ եւ կամ բթէ, մինն պարոյկէ եւ միւսն կամ շեշտէ եւ կամ բթէ, մինն երկարէ եւ միւսն սղացուցանէ, այսինքն մինն սուր արձակէ զձայն եւ միւսն գուլ, մինն ի վեր սաստէ եւ միւսն ի վայր քաշէ հակառակ միմեանց եւ խառնակեն եւ աւերեն եւ զարշեցուցանեն լսողացն եւ անհամ լինի եւ անօգուտ» (անդ):

Քնարերգութեան տեսակներից վեցերորդը եւ վերջինը, որ թուարկում է Դիոնիսիոս Թրաբեկացին եւ նրա հետեւողութեամբ մեկնաբանում են հայ քերականները՝ «խանդաղատական» բնոյթ ունեցող գրական չափածոյ երկերն են, որոնք խմբւում են առանձին գրատեսակի տակ՝ որոնք խմբւում են առանձին գրատեսակի տակ՝ որոնք մեկնելով իրենց բովանդակութիւնից: Դրանք այն բանաստեղծական երկերն են, որոնցում արծարծւում են կարեկցանք, գթասրտութիւն, թախանձանք, սրտառուչ յոյզեր:

Թրակացին սահմանում է. «τὸὺς δὲ οἰχτοὺς ὀφειμένους καὶ γοερῶς (ἀναγῶμεν)». «Եւ ὀφειμένους καὶ γοερῶς (ἀναγῶμεν)». «Եւ յիւանդաղատականն թուլակի եւ աշխարհապէս (վերծանեցուց)». (Ն. Աղւռնց, էջ 2):

«Խանդաղատական» եզրը թարգմանիչը կիրառել է բնագրի οἰχτος տերմինի փոխարէն, որ դասական յունարէնում նշանակել է՝ «հեծեծադասական յունարէնում նշանակել է՝ «հեծեծական», «կարեկցական», «թախանձական», «կան», «կարեկցական», «ողբական»: Բայց հայերենում՝ «կսկծական», «ողբական»: Բայց հայերէնում իր բառիմաստով «խանդաղատական» եզրը «կարեկցանք», «թախանձանք» իմաստները արտայայտելով հանդերձ նաեւ նշանակում

է՝ «գորովական», «աղերսական», «սրտառուչ»: Հետեւաբար՝ դիոնիսիոսեան բանաձեւումը սոյն քնարերգութեան տեսակի պէտք է հասկանալ իբրեւ այնպիսի սրտառուչ ու կարեկցալի բանաստեղծութիւններ, որոնց բարձրաձայն ընթերցումը յանձնարարուած է կատարել ձայնի երկարաձգումով («թուլաբար») եւ լացակումաց՝ արտասուածախառն յուզումով («աշխարհապէս»):

Այսպէս, Ստեփանոս Միւնեցին «զգուողական» եւ «գորովական» բովանդակութիւն ունեցող չափածոյ երկերն է համարում իբրեւ «խանդաղատական» բնոյթի ստեղծագործութիւններ, որոնց ընթերցումը քնքաբար ու սրտառուչ յուզականութեամբ պէտք է կատարել՝ ձայնի արտաբերման մէջ «սիրալիրութեան» լիցքայնութիւն եւ ջերմագին գորով ու յուզական թրթիռ հաղորդելով: Ի դէպ, մարդիկ այդպիսի զգացմունքներ տածում են իրենց հարգատանջերի կամ սիրեցեալների նկատմամբ՝ ինչպէս նրանց կենդանութեան օրօք, այնպէս եւ մահուան առթիւ: Մեկնիչը գրում է. «Իսկ զխանդաղատական թուլակի եւ աշխարհապէս», այսինքն է՝ զզգուողականն, որ լինի գորովական բանք առ տղայս կամ առ սիրելիս եւ առ եղբարս՝ երբեմն ի կենդանութեան եւ երբեմն ի մահու ևնցա» (ՅՅ, ՀՄՔ, էջ 135): Յովհաննէս Նրզնկացին լրացնում է սոյն մեկնութիւնը նաեւ «այլ» աղբիւրների հաւաստմամբ՝ գըտնելով, որ այդ կարգի ստեղծագործութիւնները գորովալիր մրմունջով («աւաչաւ»)՝ մեղմ եղանակով պէտք է արտասանուեն. «Վասն որոյ քերթողացն արժան է յընթեռնուլն ըստ մտացի, նմանապէս խանդաղատական՝ եւ թուլաբար աւաչաւ ընթեռնուլ . . .» (անդ):

Վարդան Արեւելցին «խանդաղատել» բայը մեկնում է իբրեւ «ողոքել»՝ սիրտը առնել, սիրաշահել, մեղմել իմաստներով, ինչպէս մայրը իր որդուն է վերաբերում կամ հարազատներին: Իսկ Թրակացու բնագրի թարգմանութեան «աշխարհել» բայը տարօրինակ կերպով Վարդան Արեւելցին մեկնում է իբրեւ «ողորմել», «չնորհանել» նշանակութեամբ, որ բաւական հեռու է բնագրային իմաստից: Թրակացու «աշխարհել» բայը «ողբալ» է նշանակում գրաբարում՝ նաեւ «կսկծալ», «սգալ», «լացել», «ցաւել», «զղջալ» իմաստներն արտայայտելով (տե՛ս ՆՀԲ, հ. Ա, էջ 259): Վարդան Արեւելցու մօտ կարդում ենք.

